

ձեռնութիւն , չահապիրական աւաղակութեան դէմ՝ պարզեւտուութիւն . պարծենկոտ յոխորտանքներու ու տկարի վրայ յարձակուելու ստորութեան դէմ՝ պաշտպանողական քաջութիւն :

Ի՞նչ է դրդիչ պատճառը .— Նկատելով որ ցեղապետական ազատութիւնը ոչ մի ապահովութիւն չի ներկայացնէր . ցեղի կործանման վտանգը դամոկլեան սրի պէս կախուած է իրենց գլխուն . թիւրք վարչականութեան փոփոխական քաղաքականութիւնը իրենց հանդէպ՝ առանց որոշ գծի և ուղղութեան՝ միանգամայն ընդ միշտ իրենց թողեր է ցեղապետական ճորտ . կը ճանաչէն ցեղապետը և միւսները քիւրդ հաւաքականութեան թշնամի զուտ անհատականութիւն մը :

Բաւական է որ ըմբոստ քիւրդը եւկեա դառնայ , անոր համար հաւասար կը լինի Բիւրդը , Թիւրքը , Հայը . անոնց ոչ կրօնը , ոչ ազգութիւնը , և ոչ դաւանած քաղաքական գաղափարները իրեն չեն հետաքրքրէր . կերթայ կողոպտել անոր որ հարստացեր է անգլէն ժողովուրդի հացովը ու քրտինքովը . տանելով խլած կողոպտւար կը ծախէ սահմանէ սահման ու ոսկիներու գումարները կը զրկէ քրդու կամ Հայու այս ու այն գիւղը . կը հրափայէ որ այսինչ տղամարդը ամուսնացնեն որ բաղդի հարուածով աղքատացեր է . այն ինչ աղքատ գեղուհուն կամ տգեղին մարդու տան . այս ու այն քահանային ընծաներով պատուեն . այնինչ կողոպտուած եկեղեցին , եկեղեցական սպաններով զարդարեն , թշուառացած ու սոված տներուն հաց ունենալու համար ցորեն , գարի գնեն , եայլն :

Իրենց գործողութիւններու արդիւնքը վայելելու համար չատ անգամ անձամբ գնացեր են իրենք եկեղեցին՝ պսակի արարողութեան ներկայ լինելու . զարդարուած եկեղեցւոյ ժամասացութիւնը տեսնելու , ու սոված մարդկանց յագեցումէն ուրախանալու :

Գրեթէ քառորդ դար առաջ՝ այսպիսի էշկեաներէն մէկը հրապարակ իջած էր Կարնոյ , Վանի և Բաղէշի սահմանները՝ Համդօ անունով :